

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**29 նոյեմբերի 2018թ.
ք. Երևան**

N 157-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԱՐՏԱՀԵՐԹ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ «ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԸՆԹԱՑ»
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ՝
ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ԿԱՐԻՆԵ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Ազգային Առաջընթաց» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Կարինե Մելի Բաղդասարյանը 2018 թվականի նոյեմբերի 26-ին ներկայացրել է ինքնաբացարկի մասին դիմում՝ առանց նոտարական վավերացման:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (Ընտրական օրենսգիրք) 90-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պատգամավորի թեկնածուները քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն, ինչպես նաև քվեարկության օրվանից հետո՝ դիմում ներկայացնելու դեպքում իրավունք ունեն հանելու իրենց թեկնածությունը: Ինքնաբացարկի մասին դիմումը վավերացվում է նոտարական կարգով, կամ թեկնածուն ինքնաբացարկի մասին իր դիմումը հաստատում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստում:

Պատգամավորի թեկնածուի կողմից ինքնաբացարկի մասին դիմում ներկայացվելու դեպքում թեկնածուն հանվում է կուսակցության (կուսակցությունների դաշինքի) և համապետական, և տարածքային ընտրական ցուցակներից:»:

2018 թվականի նոյեմբերի 28-ին «Ազգային Առաջընթաց» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Կարինե Մելի Բաղդասարյանին իրազեկելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 28.11.2018թ. նիստի մասին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հեռախոսազանգի միջոցով տեղեկացրել է կուսակցության լիազոր ներկայացուցիչ Հայկ Գրիգորյանին, քանի որ Կարինե Մելի Բաղդասարյանը Կենտրոնական ընտրական հանձնաժողով դիմում ներկայացնելիս հրաժարվել է ծանուցման համար որևէ տվյալ տրամադրել: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 28.11.2018թ. նիստին թեկնածու Կարինե Բաղդասարյանը չի ներկայացել:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 29.11.2018թ. նիստի մասին ևս պատշաճ իրազեկվել են «Ազգային Առաջընթաց» կուսակցության լիազոր ներկայացուցիչները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 29.11.2018թ. նիստին ևս թեկնածու Կարինե Բաղդասարյանը չի ներկայացել և չի հաստատել ինքնաբացարկի մասին իր դիմումը:

Վերոգրյալը հիմք ընդունելով, հաշվի առնելով, որ ինքնաբացարկի մասին դիմում ներկայացնելու վերջնաժամկետը 2018 թվականի նոյեմբերի 29-ի ժամը 18:00-ն է և այն

արդեն սպառվել է, ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 90-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Ազգային ժողովի 2018 թվականի դեկտեմբերի 9-ի ընտրությունների «Ազգային Առաջընթաց» կուսակցության ընտրական ցուցակում (16-րդ հերթական համար) և թիվ 9 ընտրական տարածքի տարածքային ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Կարինե Մելսի Բաղդասարյանի դիմումը մերժել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. Մուկուչյան